

**ՔԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ա. Ռ. ԱՎԱԳՅԱՆ

Իր գորտնման համար մարդն օգտագործում է մեծ քանակությամբ բնական ռեսուրսներ: Մի կողմից օգտագործվող ռեսուրսների քանակի ավելացումը, մյուս կողմից նրանց ընդհանուր պաշարների նվազումը և շրջակա բնական միջավայրի աղտոտումը ամեն տեսակի «թափոն-ներով» դժվարին պայմաններ են ստեղծում մառդու գոյատևման համար:

Գուտաման պայմանները առավել ծանր են ռեսուրսօգտագործման խոշոր շրջաններում: Ռեսուրսօգտագործման և շրջակա միջավայրի աղտոտման չափերը աճում են զուգահեռաբար և համընթաց: Դա խիստ մեծացնում է գոյատևման լարվածությունը որոշակի տարածքային միավորների վրա: Եվ տարածքային (վարչական) իշխանությունները շատ դեպքերում իրավասու և ի վիճակի չեն դիմագրավելու այդ ճգնաժամային երևույթը, որովհետև սոցիալական և տնտեսական համակարգերում դեռևս գերիշխում են գերատեսչությունները և ճյուղային կազմակերպությունները:

Ժողովրդատնտեսական պլանավորման ժամանակ առաջնությունը տրվում է առանձին ճյուղերի շահերին: Եվ հարցի գերատեսչական մոտեցումը հաճախ հակադրվում է տարածքի տնտեսության ընդհանուր (կոմպլեքսային) կազմակերպման, բնական միջավայրի անարատության պահպանության շահերին:

Դեռևս մեր երկրի ստեղծման առաջին տարիներին առաջ քաշվեց ԳՈՒԼՈՒ-ի պլանը, որի գլխավոր սկզբունքներից մեկը տարածքի նպատակային օգտագործումն էր՝ նրա արտադրության կազմակերպման միջոցով: Իր հերթին տարածքային առանձին միավորների զարգացումը կապվում էր էներգիայի նորաստեղծ աղբյուրների, օգտակար հանածոների նոր ու հին հանքավայրերի շահագործման հետ: ԳՈՒԼՈՒ-ի պլանը հզոր թափ հաղորդեց նոր էլեկտրակայանների, լեռնահանքային ձեռնարկությունների ստեղծման աշխատանքներին: Դա մեծ նշանակություն ունեցավ մեր երկրի ժողովրդատնտեսական ամբողջ համակարգի վերակառուցման, առանձին շրջանների զարգացման գործում: Պայմաններ ստեղծվեցին նոր տարածքային արտադրական համալիրների ձևավորման համար:

Նետագալում արտադրության տարածքային կազմակերպման գեոլոգիան սկզբունքները աստիճանաբար մոռացվեցին: Առաջին պլան մղվեցին ճյուղային, կենտրոնից փնջաձև եկող հրամայական նեղ գերատեսչական սկզբունքները: Եվ ամեն ինչ արվում էր և մասամբ այժմ էլ շարունակվում է ի շահ ճյուղի պլանների, կատարման: Իսկ հետևանքը ծանր է և դժվար ուղղելի: Այժմ էլ լեռնահանքային շատ ձեռնարկությունների շրջակայքում կարելի է տեսնել ոչ կոնդիցիոն հումքի և մակաբացման ապառների հսկայական բլուրներ: Ավելանում են օգտակար հանածոների արդյունահանման չափերը, մեծանում են «թափոնների» քանակը, վատթարանում է շրջակա միջավայրի վիճակը: Վեր է հառնել լինել-չլինելու հարցը: Ու լինելու առաջնահերթ» նախապայմանը վերակառուցումն է. ինչպես նշվեց ՆՄԿԿ 1987 թ. հունվարյան պլենումում, «բացի վերակառուցումից մեզ այլ ծանապարհ ուղղակի չկա»¹:

Վերակառուցման կարևոր նախապայմանը արտադրության ինտենսիվացումն է, որն արտադրության զարգացման միակ ու ընդունելի ուղին է: Եվ դեռևս 1985 թ. ՆՄԿԿ մարտյան պլենումում կոնկրետ նշվեց. «Մենք պետք է հասնենք այն բանին, որ վճռական շրջադարձ կատարվի ժողովրդական տնտեսությունը ինտենսիվ զարգացման փոխադրելու գործում»²:

Վերակառուցումն առաջին հերթին վերաբերում է ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերին: Սակայն տեխնոլոգիական պրոցեսների խորացման ժամանակ առաջանում են ար-

¹ Материалы пленума ЦК КПСС 27—28 января, 1987 года, Политиздат, 1987, стр. 15.

² Նյութիկ արտահերթ» պլենումի նյութերը, 1985 թ., մարտի 11-ին, եր., 1985 թ., էջ 13:

տաղտության նոր օղակներ, որոնք դուրս են մտնում Ճյուղի տեխնիկական և ֆինանսական իրավասությունից: Միաժամանակ, հենց այդ արտադրության նոր օղակներն են ինտենսիվացման գլխավոր բազան: Այստեղ արդեն նախադրյալներ են ստեղծվում արտադրության Ճյուղային համակարգերին զուգահեռ զարգացնելու միջնուղայինը: Ճյուղային և միջնուղային կատարյալ համակարգերի ներդաշնակ զարգացումը պայմաններ կստեղծի տարածքային արտադրական համայնքների կատարելագործման համար:

Արտադրության ինտենսիվացումը նաև նորագույն տեխնիկական և տեխնոլոգիական միջոցների կիրառման միջոցով բոլոր տեսակի հումքային և նյութական ռեսուրսների նպատակային օգտագործումն է, որը առանձնապես վերաբերում է լեռնահանքային արդյունաբերությանը: Թերևս արդյունաբերության ոչ մի ճյուղում այնքան «թափոններ» չեն առաջանում, որքան այստեղ: Լավագույն դեպքում այդ «թափոնները» կուտակվում են առանձին պահեստներում, հետագայում մշակության կանխակալումով: Եվ այդ «թափոնները» այնքան շատ են, որ կարծես եկող սերունդների գլխավոր հոգսը պետք է լինի մեզանից ժառանգած «թափոններին» վերամշակումը: .

Օրինակ. Հայկական ՍՍՀ հզոր շինարարական ինդուստրիա ունեցող երկիր է, այստեղ շահագործվում են մի քանի տասնյակի հասնող բնական շինանյութերի հանքավայրեր: Ծինանյութերի արդյունահանման ժամանակ ստացվում են մեծ քանակությամբ «թափոններ», որոնք կուտակվում են շրջակայքում: «Թափոնների» մեջ են մտնում հանքավայրի վերին մասում գտնվող բերրի հողը, մակբացման ապառները, քարի կտորման և կտրման ժամանակ առաջացող բեկորները և փոշիները: Զարհատ մեքենաների միջոցով տուֆից որմնաքարերի ստացման ժամանակ օգտակարության գործակիցը հասնում է 30—35 տոկոսի, մնացած 65—70 տոկոսը կազմում են մնացորդները: Ընդ որում, մնացորդների մոտ 1/3-ը քարի փոշի է, որը առաջանում է սղոցման ժամանակ: Արթիկի տուֆից 1000 մ² սալիկներ արտադրելու ընթացքում առաջանում է 15 տոննա փոշի, մյուս տուֆահանքերում՝ մինչև 21—27 տոննա փոշի: Զարակտորները և մյուս «թափոնները» մեծ վնաս են տալիս շրջակա գյուղատնտեսական հողահանդակներին, տուֆափոշիները ցեմենտացնում են հողերը, աղտոտում ստորերկրյա և վերերկրյա ջրային ավազանները, մթնոլորտի ստորին շերտերը:

Երևանի Զարի և սիլիկատների ինստիտուտում մշակված տեխնոլոգիական միջոցները ցույց են տալիս, որ տուֆափոշիները և տուֆի մանր կտորները բետոնե շաղախի ստացման համար շատ բարձրորակ հումք են: Բետոնե շաղախի մեջ հրաբխային խարամի ու ավազի փոխարեն տուֆի մնացորդների օգտագործումը հնարավորություն է տալիս մեկ խոր. մետր շաղախի հաշվով ստանալու 0,40—1,49 ուրբու օգուտ: Տուֆի մնացորդները բարձրորակ հումք են 50—250 մակնիշի բետոնների ստացման համար:

Նույն ծանր վիճակն է պղնձի, պղնձամոլիբդենային հանքավայրեր շահագործող ձեռնարկություններում: Այստեղ ավելի առաջ են գնացել, ավելի շուտ հասել են «ինձանից հետո ջրհեղեղ» հասկացությանը: Բացարձակ անպատասխանատվությամբ շրջակա ձորերն են լցվում մակբացման ապառները: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում համապատասխան տեխնոլոգիա չունենալու պատճառով թանկարժեք հանքաքարի մի մասը չի մշակվում, այլ խտնվում է մակբացման ապառներին ու թափվում:

Գունավոր մետալուրգիայի ձեռնարկություններում հսկայական չափերի են հասել հանքաքարի հարստացումից հետո ստացվող մնացորդները՝ «պոչերը»: Նրանք գրեթե չեն օգտագործվում, առաջմ պահեստավորվում են: Մինչդեռ Երևանի Զարի և սիլիկատների ինստիտուտում կան հանրապետության գունավոր մետալուրգիայի բոլոր ձեռնարկությունների «պոչերի» մշակության տեխնոլոգիական սխեմաները՝ տեխնիկա-տնտեսական հիմնավորումներով, ըստ որի «պոչերը» միանգամայն պիտանի են ցեմենտի, շինարարական աղյուսների, երեսապատման սալերի, այլ շինանյութերի արտադրության համար:

Ստացվում է մի կողմից ահռելի չափերի հասնող արտադրական թափոններ, որոնք բացարձակապես աղտոտում են շրջակա միջավայրը. մյուս կողմից այդ թափոնները միանգամայն պիտանի են տնտեսության այլ ճյուղերի համար: «Թափոնների» մշակության համար առկա են տեխնոլոգիական սխեմաներ, իսկ լրացուցիչ ծախսերի համար՝ ֆինանսական հնարավորություններ: Միայն Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում կան մեծ քանակությամբ ներքին ռեսուրսներ: Այստեղ մեկ ուրբու ապրանքային արտադրանք ստանալու համար ծախսվում է ընդամենը 52,3 կոպեկ: Ծահութաբերության այս բարձր տեսակարար կշիռը հնարավորություն է տալիս այս ֆինանսական միջոցների մի մասը ուղղել արտադրական «թափոնների» վերամշակությանը: Ինքը՝ օրենքն անգամ այդ է պահանջում. «Հանքարդյունաբերող ձեռնարկությունների նախագծերում պետք է նախատեսվեն օգտակար հանածոների հանքավայրերի բացման անպահի եղանակներ ու մշակման սխեմաներ և հանքային հումքի վերամշակման տեխնոլոգիական անպահի սխեմաներ, որոնք ապահովեն ընդերքից հիմնական և դրանց հետ համատեղ տեղադրված օգտակար հանածոների պաշարների առավել լիակատար նմայվեքսային ու տնտեսապես նպատակահարմար կորզումը, ինչպես նաև դրանցում պարու-

նակող արդյունաբերական նշանակություն ունեցող բաղադրամասերի օգտագործումը, օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ժամանակ մակաբացման ապառների ուցիդնալ օգտագործումը»³:

Օրենքն էլ ապահովում է և պահանջում հանքային հումքի ու մակաբացման ապառների կոմպլեքսային օգտագործման գաղափարի կիրառումը: Իսկ եթե այն չի կիրառվում, ուրեմն իզուր է: Ինչպես նշում է Կ. Մարքսը, «պրակտիկայում է մարդն ապացուցում իր մտածողության ճշմարտությունը, այսինքն՝ իրական ու հզոր ապակողմնային լինելը»⁴:

Երկրի ընդերքից հանված լեռնային զանգվածի նպատակային օգտագործման գլխավոր նախապայմաններից մեկն էլ հանքաքարի կոմպլեքսային օգտագործումն է: Որովհետև ինքը՝ հանքաքարը, ունի կոմպլեքսային բնույթ: Օրինակ, Ջանգեզուրի պղնձամոլիբդենային հանքաքարի մեջ բացի պղնձից ու մոլիբդենից կան 25-ից ավելի այլ տարրեր՝ սելեն թելուր, վիսմուտ, ոսկի, արծաթ...: Այստեղ խնդիրը բոլոր արժեքավոր տարրերի կորզումն է: Իհարկե տեխնիկայապես հնարավոր չի և ոչ էլ տնտեսապես ձեռնառնել բացարձակապես բոլոր օգտակար տարրերի կորզումը: Ինչպես նշում են Կ. Ն. Լեկսինը և Ա. Գ. Տոկարևան. «Այստեղ կարևորը ժողովրդատնտեսական առավելագույն օգուտների ապահովումն է»⁵:

Գունավոր մետալուրգիայում և շինարարական ինդուստրիայում առաջացող «թափոնների» վերամշակման համատեղ համակարգերի մշակմամբ պայմաններ կստեղծվեն արտադրության ինտենսիվացման համար: Միջնորդային ձեռնարկությունները կարող են օգտագործել արտադրության այս երկու ճյուղերի բոլոր արտադրական «թափոնները»: Կարտադրվեն ժողովրդատնտեսական նոր ապրանքներ:

Արտադրության բարդ, սակայն կատարյալ համակարգերի մշակումը բարենպաստ պայմաններ է ստեղծում աշխատանքային ռեսուրսների ամբողջական և նպատակային օգտագործման համար: Այս բոլորը հասցնում են նրան, որ որոշակի տարածքների վրա ստեղծվում են արտադրության և սոցիալական ամբողջ վերնաշերտի փոխկապակցված և փոխապայմանավորված ներդաշնակ համակարգեր: Մա էլ հենց տարածքի նպատակային օգտագործումն է:

Արտադրության կազմակերպման տարածքային հարցերի լուծման լուրջ անելիքներ կան Հայկական ԽՍՀ-ում, որի տարածքի 40 տոկոսից ավելին տուժել է երկրաշարժից: Վերջինիս հետևանքների վերացման համար միութենական կառավարությունից հատկացվել է 8 մլրդ ռուբլի: Զգալի քանակությամբ նյութական և ֆինանսական միջոցներ են ստացվում արտասահմանյան երկրներից: Այս հատկացումների զգալի մասը կծախսվեն շինարարական նպատակներով: Ավերված բնակավայրերի վերակառուցման համար հիմնականում կարտադրվեն տեղական շինանյութեր: Ըստ արդեն ընդունված որոշումների, միայն տուֆի որմնաքարերի արդյունահանումը կավելանա 2,0—2,5 անգամ: Հետևաբար կավելանան և «թափոնները», նրանց տակ կարող են ոչնչացվել շատ հողահանդակներ: Այսօր արդեն միայն շինանյութերի հանքավայրերի շահագործման համար հատկացվել է շուրջ 1500 հա վարելահող: Եվ ինչպես տեղին նշեց Ն. Ռիժկովը. «Այստեղ հողը ոսկու գին ունի»: Հետևաբար տուֆի և մյուս տեսակի շինանյութերի հանքավայրերի շահագործմանը պետք է մոտենալ կոմպլեքսային ձևով, ելնելով շինարարության, գյուղատնտեսության և ընդհանրապես տարածքի ժողովրդատնտեսական համակարգի զարգացման շահերից:

Երկրաշարժի ընդգրկած գոտում շինարարական և ընդհանրապես արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները նորից են կառուցվում (նախկինում եղածները կամ ավերվել, կամ էլ վթարափոխ վիճակում են): Օրվա և ապագայի պահանջն այն է, որ այդ ձեռնարկություններն ամբողջությամբ մշակեն ընդերքից հանած լեռնային զանգվածը: Բաց հանքերում մինչև շահագործման աշխատանքները սկսելը պետք է մի կողմ տանել վերջին բերրի հողաշերտը: Հանքավայրի շահագործումը ավարտելուց հետո տեղանքը պետք է հարթեցնել և նորից ծածկել նախկին հողաշերտով: Այստեղ անհրաժեշտ է, որ գործի արտադրության փակ շրջափուլի մեթոդը: Ունեցած ֆինանսական միջոցներն անհրաժեշտ է օգտագործել նաև հանքավայրի շրջակայքի անմշակ, քարաքրոններով, քարաբլուրներով ծածկված հողատարածությունների բարելավման համար:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ երկրաշարժային գոտին ունի մեծ քանակությամբ ազատ աշխատուժ: Այստեղից ամեն տարի արտագնա աշխատանքի էին մեկնում հազարավոր երիտասարդներ՝ տեղում աշխատատեղերի պակասության պատճառով: Դրան ավելացրած՝ միայն երկրաշարժի հետևանքով շարքից դուրս են եկել 82 հազար աշխատատեղեր:

Երկրաշարժից տուժած շրջաններում մեծածավալ աշխատանքներ են տարվում ժողովրդական տնտեսության, հետևաբար նաև աշխատատեղերի վերականգնման ուղղությամբ: Այս

³ Ընդերքի վերաբերյալ Հայկական ԽՍՀ օրենսգիրք, Եր., 1976, էջ 37—38:

⁴ Կ. Մարքս, Տ. Լագեյս, Երկեր, Եր., 1987, էջ 1:

⁵ В. Н. Лексин, А. Т. Токарева. Экономика комплексного использования сырья в цветной металлургии. М., 1976, стр. 224.

գործում իր կարևոր տեղն ունի շինանյութերի արդյունաբերությունը: Վերջինիս հետագա զարգացման նախապայմանը արտադրական ամբողջական ու բազմաձյուղ, ավարտուն շրջափուլերի ստեղծումն է: Դա հնարավորություն կտա անմնացորդ արտադրական համակարգերի ստեղծման միջոցով բարենպաստ պայմաններ ապահովել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգացման համար, շրջակա բնական միջավայրը զերծ պահել աղտոտումից, կործանումից, փրկել բերրի հողատարածությունները:

Այսպիսով, բնական ռեսուրսների կոմպլեքսային, անմնացորդ օգտագործումը և տարածքի սոցիալ. տնտեսական ամբողջ վերնաշերտը կազմում են մեկ միասնակախություն: Այդ միասնակախության կատարելության չափանիշը կախված է համակարգի մեջ մտնող բոլոր տարրերի փոխադարձ ներդաշնակությունից:

А. Р. АВАКЯН—Единство проблемы рационального использования территории и природных ресурсов.—Проблема взаимосвязи рационального использования территории и природных ресурсов актуальна. Единственным путем ее решения является переход от узкоотраслевого ведомственного мышления к комплексному, территориальному. Приведен большой фактический материал о современном состоянии использования полезных ископаемых Армянской ССР, сделаны конкретные выводы и предложения по рациональному использованию цветных металлов и стройматериалов в целях совершенствования территориальной структуры общественного производства.